



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Հ Ե Մ Տ Ա Ր Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ն Ի « Ա Ր Ր Ը » Ի

ՆԱՓԹԻ ՓԸՆՏԱՆ

Կասակ մի արարուածով

Գրեց Արթուր Արթուրի



Հ Ե Մ Տ Ա Ր Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ն Ի
Ս. ՄԻՄԻԱ
Ս. ԵՐԵՎԱՆ
Ս. ՄԱԾՈՒՄ Ի ԿՈՒՆ
Ս. Ս. Ս. Ս.

ԲԱԳՈՒ
Տպարան «Արր»
1904.

891.99
Ա-13

Arms
5982

2005

ՀՐԱՏԱՐԱԿՆԵՐԻՆԵՆ, ԱՐՐՈՂ 06 DEC 2010

891.59

Ա-13 *Handwritten notes in Armenian*

ՆԱՓԹԻ ՓԱՆՏԱՆ


Մե

Կասակ մի արարուածով

Handwritten signature

Գրեց Ալեքանդր Արեւիանց

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЗЕНН
Академии Наук
СССР



Handwritten mark

ԲԱԳՈՒ
Տպարան «Արօղ»
1904.

Handwritten signature

16644

800292
10-101.20.1

Дозволено цензурою. Тифлисъ, 18 Февраля 1904 года.



58389-67

Настоящая комедія подь заглавіемъ
«Нефтяной фонтанъ» разрѣшено къ пред-
ставленію на сценахъ края.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒՍՏԱՄԻՉ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

ԱԼԷՔՍԱՆԴՐ

ՄԻՐՉԱՅ

ՉԱՖԱՂԱԹ

ԽԱՉԻ

ԱՆԹԱՌԱՄ

նաֆթահանքատէր:

նրա կառավարիչը:

{ նաֆթահանքի

{ մշակներ:

գործակատար:

մի մշակի մայրը:

Անցքը կատարվում է 1890 թ. Բալխասնում:

Ծանօթումը: Չայնաւորները, որոնց վրա նշանակած է բում (`), պէտք է հնչել աւելի մեղմ, որտեղ շեշտ ('), այնտեղ բառերը պետք է շեշտել. չեղած տեղը սովորական կանոնով:

Տեսարանը ներկայացնում է ընդարձակ սենեակ: Մէջտեղ և աջ կողմ դռներ: Չախ կողմ պատուհան: Աջ դռնից դէպի դահլիճ մեծ գրասեղան, որի տակին բժոց, իսկ վրան զանազան հաշուէզրքեր, Թանաքաման, գրիչ, համրիչ: Մէջտեղի պատի վրա, դռան աջ կողմ հեռախոսի ապարատ, ձախ կողմ Բալխասնու քարտեզը: Այս և այն կողմ ամոռներ:

Տ Ե Ս Ի Լ 1.

Ա. Լ. Է. Ք. Ս. Ա. Ն. Գ. Ր. մեկնակ

Ա. Լ. Է. Ք. (Զրջելով): Պարիզի աշխարհանդիսում մեր այս քանդուած Բալխասնիի տեսարանը այնքան գրաւիչ և զմայլելի էր շինված, որ մտքումս դրի—«վերադարձայ Բաքու թէ չէ, անպատճառ մի որ և է պաշտօնով տեղափոխվել Բալխասնի»: Հանգամանքները յաջողվեցին և ես ինչպէս տեսնում էր, գտնվում եմ այստեղ: Այստեղ, այս սև նաֆթի, մուրի, ծուխի, ցեխի և կեղտոտութիւնների մթնոլորդում Պաշտօնով թէև կառավարիչ եմ պարոն Մխիթարեանի մօտ, բայց ինքս զարմանում եմ թէ

այդ յիմար և փքուն բառը ինչու են խփել մեր պոչից: Եւ ճշմարիտ ինչ կառավարիչներ ենք մենք: Քաղաքի հաշւետան վերջին ծառան համարձակվում է քեզ նկատողութիւն անել թէ «այդ ինչ է, այսքան էլ ճարպ կը բանացնեն, ուտում էք, ինչ է»: Իհարկէ կամայ սկամայ բարկութիւնդ կուլ ես տալիս և բանը կատակի քցելով ասում. «սիրելի Ջուադ, միթէ մենք մուկ ենք, որ ճարպ ուտենք»: Մի բոպէ հանգիստ չ'կայ: Հազիւ ուզում ես մի բան կարգաս, մէկ էլ տեսնում ես եկան այդ Խաչիները ու Միրզաները «աղա ժալումկան¹ ինգա՛ւ հորին մաչը». «աղա պարավիկին² տոպկան³ փոր ա տուրար». «աղա խիչանդը⁴ կոտրից քա՛րա՛ստին⁵ նի թափից հո՛րին տակը»: (Դրսից լսվում է, սաստիկ դրմփոցի ձայն):

Տ Ե Ս Ի Լ 2.

Ա.Լ.ԲՍԱՆԴԻ ԵՒ ԽԱՉԻ,

ԽԱՉԻ (Միջի դռնից դալով, շտապով նայում է առաստաղին) էտ հի՛նչ թըրըմփոց եր իլա՛ւ:

Ա.Լ.Բ. Այ տղայ, դրսից դո՛ւ ես գալիս, ինձ ես հարցնում:

¹դուլ, ²շոգեկամսայի, ³վառանոց ⁴երկամի ձող, ⁵գործիք:

ԽԱՉԻ Ես էլ գիղամ թա թըրըմփոցը ըստէդ եր իլա՛ւ: (Գնում է միջի դռնով):

Ա.Լ.Բ. (Խաչիի ետևից): Հը՛, և սա իմ գործակատարս է: (Նստում է):

Տ Ե Ս Ի Լ 3.

Ա.Լ.ԲՍԱՆԴԻ ԵՒ ՄԻՐԶԱՅ:

ՄԻՐԶԱՅ (Մտնում է միջի դռնով և դռան մօտ կանգնում): Գնրուն կառավարիչ, վանխոսվուչ, էտ թըրըմփոցը փանանլին պլիտանն ար. վեր արանբին¹ մաչան եր քցեցին, ինդի սա՛ս եր իլա՛ւ:

Ա.Լ.Բ. Այ ապրես:

ՄԻՐԶԱՅ Ես Միրզա՛ն ըմ, Ապրէսը ըստէդ չի:

Ա.Լ.Բ. Լաւ կեցցէս Միրզայ: Գնա Խաչինն ասա սայլապանի փողը տայ, ճանապարհի:

ՄԻՐԶԱՅ Բանչիւստա՛³: (Հեռախոսի զանգակը ճնչում է): Տըլփօնը⁴ զվանի ա՛⁵ անըմ:

Ա.Լ.Բ. Լաւ, տեսնում ե՛ս որ ես ինքս լսում հմ այդ «աըլփօնին զվանին»: (Կողմ): Այստեղ ես իմ մաքուր հայերէնս էլ կ' մուսանամ: Արդէն քիչքիչ Զանգեզուրի բառբառը մուտք է

¹Ծածկոց, ²սայլ, ³ձայն, ⁴զլխիս վրայ ⁵հեռախօսը ⁶ճնչում է:

գործել իմ լեզուիս մէջ: Եւ ինչ լեզուով խօսես այդ ողորմելիների հետ: (Միրզային): Հը. էլ ինչ կայ կանգնել ես Միրզայ: Երեւի մի փորացաւ ունես:

ՄԻՐԶԱՅ Կանաւարիչ. վէր մըէր չըթ-վէրտի՝ նումէրը՝ փանտալ անի, դօնըդս³ Ըվը-ցըննակամըս:

Ա.Լ.Բ. Ինչպէս չէ: Յետոյ. (Հետսխօսի զանգաղը հնչում է):

ՄԻՐԶԱՅ Ոչինչ: Տըլփոնը զվանի ա անըմ: (Գնում է միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 4.

Ա.Լ.ԲԱՍՆԴԻ ԵՒ ԽԱՉԻ.

Ալէքսանդր մենակ խօսելուս, Խաչին հանդարտ միջի դռնով մտնում է:

Ա.Լ.Բ. (Վեր է կենում եւ մօտենում հեռախօսին որով և սկսում է խօսել): Պարոն Մխիթարեանի նաւթհանը: Այո ես եմ, Ալէքսանդրը: Բարև ձեզ Կարապետ Ռուստամիչ: Չորրորդ համարը մեծ յոյս է տալիս: Ամեն ըսպէ ֆանտանի ենք սպասում: Հինգերորդում բաններս լաւ չէ: Երեկվանից այնտեղ կացին է

¹չորրորդ, ²համարը, ³ոռծիկս:

նստած: Այո: Արդէն բռնել ենք և բաշում ենք. երկու զիւյմ եկել է: Երկրորդից ժալօնկան հանել ենք: Թէև ամբողջ գիշերը շարշարվել ենք, բայց անպիտան կլապանը մնաց հորում: Ոչինչ. նա էլ կ' հանենք: (Երբեմն ափանջ է դնում): Ի՞նչպէս: (Չայնը բաշացնելով): Հարևանը. նախանձից տրաքում է. գալիս է նայում և քնթի տակ մըռմուշով կորչում: Նրանք էլ 158 սաթէնումն են և ես վախենում եմ չ'լինի թէ միևնոյն աղբիւրը լինի, և մեր նաֆթն էլ նրանց մօտ գնայ: (Սովորական ծայնով): Միամիտ եղէք: Ինչպէս կտօր շաքարի վրա ճանճեր, այնպէս էլ մեր չորրորդի վրա բանւորներ: Դէ ակը ինչպէս կ'լինի համշտապենք մարդ աւելացնենք, համ էլ ծախսը քիչ լինի: (Կարծ զանգ տալով հեռանում է): Քաղաքավարութիւններդ կարվի: Խօսքը բերանումս զանգաղը տուաւ ու հեռացաւ: Թ'իւ: (Ժամացուցին նայելով): Ժամի երեքն է, իսկ ես դեռ չեմ հանգստացել: Ի՞նչ կայ Խաչի:

ԽԱՉԻ Փանթանլին զափաղը ընթուենցի:

Ա.Լ.Բ. Լաւ արիր: Յետոյ:

ԽԱՉԻ Ես զղմըմ մին պէն խնթրած:

Ա.Լ.Բ. Օհօ «խնթրած». լաւ ոճ է. ասանտանեմ, ես ուզում եմ լսած:

ԽԱՉԻ Դէ ասրմ ըմ մունք էլ մին մարթընք, մին մարթու աղայ ընք, մին օտիլ խմէլի մա՛ջա՛լ¹ չ'կայ: Դէ կնէկ չ'կայ, մա՛ր² չ'կայ, հա՛ր² չը կայ: Խնթըրմ ըմ մին վա՛ղա՛³ նշանակիք.—Թա՛ հիբ⁴ պէտմ ա՛ ճտինք, հիբ պէտմ ա խմինք:

Ա.Լ.Ք. Պարզ բան է. գնա՛, երբ քաղցած ես՝ կեր, երբ ծարաւ ես՝ խմիր:

ԽԱՉԻ Հրամանա՛:

Ա.Լ.Ք. Գիտեմ որ այդ սահմանափակ գլխովդ այդ հասարակ փիլիսոփայութիւնը չես հասկանալ:

ԽԱՉԻ Հրամանքս:

Ա.Լ.Ք. (Կողմ): Որպէս թէ հասկացաւ: Ուրի՛շ:

ԽԱՉԻ Օ՛րիւշ պէն չ'կայ: Ես ճգըմըմ տիւս կեամ:

Ա.Լ.Ք. Ինչո՛ւ:

ԽԱՉԻ Լիհա՛ ինդի՛⁵:

Ա.Լ.Ք. Ինչպէ՛ս թէ «լիհա՛ ինդի»:

¹միջոց,²մայր ³ժամանակ, ⁴երբ ⁵հենց էնպէս:

ԽԱՉԻ Դօնըղըս խրէկ ա՛: Էտ ա փանտալ ա ըննական, ես էտ դօնըղանը կե՛նալ չըմ:

Ա.Լ.Ք. Եղբայր, դեռ ոչինչ չ'կայ ամենքդ ստներդ բարձրացրել էք: Դու ողորմելի որտե՛ղ ես գնալու, ս՛վ քեզ աւել կտայ:

ԽԱՉԻ Մօբէլը:

Ա.Լ.Ք. Ո՞վ

ԽԱՉԻ Մօբէլը, Մօբէլը: Ի՛րեք տարի ընդրայ քշտին² ըմ իլա՛լ:

Ա.Լ.Ք. Երեսդ պարզ: Երեք տարի այնտեղ ես եղել ե դեռ խեղճի անունն էլ ուղիղ չես սովորել:

ԽԱՉԻ Հրամանքս:

Ա.Լ.Ք. Այդ է: Դու հենց լուսքի տակին գլխին քո «հրամանքսդ» չ'մօռանաս: Բայց դու գիտե՛ս որ նրանց մօտ պէտք է լաւ ուսերէն գրել կարգալ իմանաս:

ԽԱՉԻ Ես ինքս քանի տարի ըստեղ ընտեղ դուլլուզ³ անրած ըմ:

Ա.Լ.Ք. Է՛լի՛ որտեղ:

¹բիշ, ²մօտ, ³ծառայութիւն:

ԽԱՁԻ Զօրնի գորդի¹ պրիստաւին² քաղին: Առսի³ ընդրա աչքին մաշի լիւսն ըմ իլա՛լ:

Ա.Լ.Բ. Փշիր այդ սուտերը, փշիր:

ԽԱՁԻ Էն Ընջըմնա ճիրա՛րը, Էն Խուզ-տիւփը, Էն Պանտալեոն բժիշկը: (Խաչակնքում է):

Ա.Լ.Բ. Պանտալեոնը ո՞վ է:

ԽԱՁԻ Երբա՛ս սօրի ա: (Լոուժիւնից լետոյ). Մհէկո⁵ հինչըս ասըմ: Էտ ա փառք Աստու փանտալ ա: Առանց ինձ հսնց կինի:

Ա.Լ.Բ. Օ՛ իհարկէ: Առանց էշի գլուխ պատարագ:

ԽԱՁԻ (Յիմար ծիծաղով): չրամանքս:

Ա.Լ.Բ. Յետոյ ոսերէն կարդալ գիտես:

ԽԱՁԻ չրամանքս: Հէսա իմ կիրած մին պրաչէննի⁶ օնիմ ծոցըմս: (Հանում է ծոցից ծալած թուղթ):

Ա.Լ.Բ. Տեսնեմ: (Առնում է և նայում): Օհօ խնդիրը է:

ԽԱՁԻ 2է. պրաչէննի ա՛:

¹Սև քաղաքի, ²Թաղապետ, ³համարեա, ⁴մեծ, ⁵այժմ, խնդիրը,

Ա.Լ.Բ. Միկնոյն է: (Ժծադում է և կարդում): «Եգօ¹ բլագօրօտնի գօսպօգա Մօրէլ, Խաչի Ագաջանովա: Պրաչէննի: Վօտ մօյ խատտ¹): (Աւելի ծիծաղալով). «Կաթօյստայ մինէ պըր-նմատ դտէլայ: Մօյ ժալովաննի պըղըսադ ու-րուրի մէյսաց: Մալօ: Մէստ. պրկաշիկ, զգան-չիկ պսէ բալիօ²»: Այ տղայ դու այդ ոսերէնը որտե՞ղ ես սովորել:

ԽԱՁԻ Տաթեայ վանըմը:

Ա.Լ.Բ. Սա ես կուզարկեմ մեր լրագիր-ներին:

ԽԱՁԻ Հս՛լա՛³ տա շօռնալօյն ա⁴, բա՛րա՛լքա՛մ բէլավայը⁵ տեսնաս:

Ա.Լ.Բ. Հենց սա էլ լաւն է: Դէ դու մէկ գնն էր հիւսնին կանչիր:

ԽԱՁԻ Հիւսէյինը շիտանց ա՛ ստակալ:

Ա.Լ.Բ. Ի՞նչ Հիւսէյին:

ԽԱՁԻ Տիւ վէր Հիւսէյինն ըս անըմ:

¹—Նրա ազնիւ պարոններ Մօրէլ: Խաչի Աղաջանեանի խնդիր: Ահա իմ ձեռագիր, ²խնդրեմ ինձ ընդունել արա: Իմ ոտծիկը լիսուն րուրի ամիս: Քիչ: Տեղ: Գործակատար, լանձնող բոլորը միկնոյն: ³դեռ, սևագիրը, ⁴ապա եթէ, ⁵սպիտակագիրը, մաքուրը:

ԱԼԷՔ. Ես Հիւսէյին չեմ ասում, այլ հիւսն, դուզար¹, պլօտնիկ²:

ԽԱՉԻ Դէ ես էլ զիւզա՞ր Հիւսէյնն ըմ ասըմ իլի:

ԱԼԷՔ. So իմ ասածս հայ է և ոչ թուրք:

ԽԱՉԻ Պա խէ՞ տիւզա՞ր Հիւսէյնն հայ ա:

ԱԼԷՔ. է է է. ինձ էլ չզկլվացրիր: Դու գնաս մեր հարևան Բազարովի զիւզա՞րին կանչիր մեզ մօտ:

ԽԱՉԻ Ըմմ. էն վեր Խուզա՞ղը ընդրա ասարսաղ Ըռաքե՛լ ա՛ տիրա՛լ:

ԱԼԷՔ. Ջաւազ չէ՞ անունը:

ԽԱՉԻ Ըմմ. Ջաւաղը: Ջաւաղը հնէկ. (ցոյց տալով պատուհանից) վըիշկին³ գլխին քա՛լ-լա՛շարխն ա՛ տինըմ: Հմ Բազարովը եկը տեսաւ, լիհա՛⁵ էշ կտրած, դիւզ⁶ քինա՛ց: Էրկու մանէթ իւիլ ըմ խոստացալ.

ԱԼԷՔ. Այ ապրես. միշտ իմ կողմ եղիր, ասածս ճիշտ կատարիր և վերջը մարդ կ'զարնաս: Դէ ես քիչ հանգստանամ, թէ քեզ հարցնեն ասս գնաց գործերի վրա: (Գնում է աջ դռնով):

¹—²հիւսն, ³բուրգի, ⁴վերևի անիւն է, ⁵հենց, ⁶ուղիղ:

Տ Ե Ս Ի Լ 5.

Խ Ա Չ Ի մեկնակ:

ԽԱՉԻ ¹Դա՛րա՛ խա՛լվա՛թ, թիւքի բա՛գ¹: Քնգն էլ ես ըմ: (Նստում է կառավարչի տեղումը և մէկ գրիչ վերցնելով գրել ներկայացնում): Առ-ուի մըէր ուզըավաշին² մնան մարդ չ'կայ: Դօրթ ա լիզուն չար ա, ամմա³ սէրաը խէ պարի ա՛: Ախ մին մըէր չըթվերտին փանթալ անի, դօնլըղըս բառասուն տեռնայ, էլ դա՛րդս⁴ չինիլ: Ա՛խ, ա շան տղու դա՛լամ, մին ճըլվըգ-աըընու, վէր մունք էլ ուզըավաշի տեռնայը, ըստէզ նստինք է: Ամմա հունց ուզըավաշի կը տեռնամ: Հրաման կ'տամ, ջառ կ'կանչիմ, իւշիւնց բիարու⁵ կանիմ: Խոխոց լօխշին⁶ էլ դամշիւ⁷ տակ կ'տամ, կոռ ու բեգա՛ն կտանիմ: Ամմա ետ կ'տեռնան ինձ կ'թըմփըցնին է, կ'թըմփըցնին է: (Հեռախօսի գանգակը խփում է): Ես խէր⁸. ախ մին խազայինը⁹ ինի (բաշ ձայնով) մի քանի պեներ խաբար¹⁰ տամ, բա՛լբա¹¹ աչքը նի մընիմ. էտ ուզըավաշուն առուի ծերքըմըս խմոր չինիմ: (Կեղծաւոր ձայնով խօսում է հեռախօսով): Պրամըսալ¹² Մըխթարով. ապեր տիւըս: Ըխտօ¹³ ապարատ: Ըխտօ: Հը

¹—¹ծորր խաղաղ, աղուէսը տէր, ²կառավարիչ, ³բայց-
⁴ցաւս, ⁵խայտառակ, ⁶բոլորին, ⁷մտրակի, ⁸բարի օգուտ,
⁹տէրը, ¹⁰լուր, ¹¹գուցէ, ¹²նաֆթահանք. ¹³հվ:

նապերն ա: Ապեր: Հրամանքս: Է՛նա քոն իլած: Հին գիտամ Է: Մին էրկու սահաթ¹ կինի քոն իլած ա: Հրամանքս: Լիհա երա կենըմ արլիոնա խօսըմ, էլհա պարանց ա ընգնըմ քոն ինըմ: Քըչէրը: Քըչէրը կարտի ա² տամ: (Աւելի ցած ձայնով և յետ նայելով): Ապեր, տոնա քանդըմ ա, տիւ բէյխաբա՛ր³: Մունք վէր ինինք վէչ, ըստեղ կ'թլանին, էն Աստուծը: Հինչ, հով. հոմլըս է: (Բարկացած): Աւանակը ապերտ ա: (Կողմ): Ես էլ գիտամ թա՛ նապերն ա: Դէ կորեր կլիասս իլ: Աըըըմալ⁴: (Զանգակը տալիս է որ հեռանայ) Պա բա՛յքամ ապերն ար: Վէչինչ, սոտաւ կ'դիւղըցնինք: (Նստում է Ալէքսանդրի տեղում):

Տ Ե Ս Ի Լ Ե.

ԽԱՉԻ ԵՒ ՇԱՖԱՂԱԹ

ՇԱՖԱՂ. (Դուրը սաստիկ բացելով և զտակով մտնում է): Աղա պարով:

ԽԱՉԻ Պահ վըխեցիվուչ. տնըչինու տղայ: 2օրտ⁵ զնայիչ⁶: (Պառլա): Փափախըս եր կցու, տիւնը զարկի: (ՔՊԻ տակին ծիծաղում է):

¹ժամ, ²Թղթախաղ, ³անտեղեակ, ⁴սինլըրը, ⁵սատանայ, ⁶գիտես:

ՇԱՖԱՂ. Ներադոթի՛ն: (Դուրը ծածկում է, զտակը վերցնում): Ես ուպրավաչուն ըմ օղըմ:

ԽԱՉԻ Եննատ խօսողն ա, որ ինինք ուրեմն թա մուեր: Հինչ խընթրմուեր օնիս:

ՇԱՖԱՂ. (Գլուխ տալով): Պարով:

ԽԱՉԻ Այ Ասծու սլորին: Մաչալլա¹ մաբիփաթիա². էտ ա ըրէլըմ ա վեր մտած տիւն եկած տղայ ըս:

ՇԱՖԱՂ. Աղա լիսա՛լ ըմ վանտալ օնիք. ինձ մըն տեղ տօք:

ԽԱՉԻ Փէչակիա անըմը կ'խօսի:

ՇԱՖԱՂ. Միւքա՛նչի³:


ԽԱՉԻ Զնաչիտ⁴ տարանչի⁵. Այսինքը հայերէն նօթատիւսպերիչ: (Վար կենալով և շրջելով): Լա՛ւ, Խարչին⁶ զղանայ, ժալովնատ⁷ հինչքան պըղըբուաիա⁸ անինք:

ՇԱՖԱՂ. Մին ամիս պէն կանիմ, կըեչիք⁹

ԽԱՉԻ էտ էլ ըս ըրլղօրօգնի¹⁰ բառբառըմ:

ՇԱՖԱՂ. Ես պէն հասկացողի դուլուղ¹¹ կանիմ:

¹զովասանք, ²բաղաբավարուծեանդ, ³նաֆթըաշող, ⁴նշանակում է, ⁵նաֆթըաշող, ⁶կերակրուելը, ⁷ոռծիկ, ⁸շնորհաւորել, ⁹կտեսնէք, ¹⁰ազնիւ, ¹¹ճառայել:



ԽԱԶԻ էտ էլ ըս լա՛ւ նախըմ: Դէ կարանս
օխանը էշի կա՛րին ճօ՛կիս:

ՇԱՖԱՂ. Խէ՛ չըմ կարալ:

ԽԱԶԻ (Ուզում է գրել): Անըմբտ հի՛նչ ա՛:

ՇԱՖԱՂ. Քեզ ծանայ Չափադաթ:

ԽԱԶԻ Հայ ըս, թորք:

ՇԱՖԱՂ. Պա խէ՛ թորք ըմ ինըմ.

ԽԱԶԻ Վէչինչ: Նէղրադումէննի¹ ար: Աղ-
գիտ անըմբ հի՛նչ ա:

ՇԱՖԱՂ. Իրագով:

ԽԱԶԻ Պակասը իսպրավլէննի² տէռաւ:
(Գրում է). Չեր շէնըմբ տէրաէր կայ:

ՇԱՖԱՂ. Հրամանքս:

ԽԱԶԻ Հայ ա թորք:

ՇԱՖԱՂ. Պա խէ՛, թորքու տէրաէր կինի:

ԽԱԶԻ Դադդէննի³ անիս խէ՛ չինիլ: Ախր
միլիմոյ⁴, Էս մին կիրոց մարթ ըմ: Ամմա դէ
«Չափադաթ Իրագով» հայի անըմ ոչ տեսալ
ըմ, ոչ լըսա՛լ: Հայի անըմբ կինի խաչի, Ծատուր

¹Թիւրիմացումիւն, ²ուզում է ասել ուղղվեց,
³ուզում է ասել ստուգես, ⁴սիրելիդ իմ:

Թուրընջի, Զվանչիր, Զհանգիր, Զաւատ, Միր-
գայ: Թա չէ Չափադաթ:

ՇԱՖԱՂ. (Նրա խօսքը կտրելով): Ատա
ճըրաըրեցի Աղաջանին թուռը Խանչի, հի՛նչս
էրկանցըն՞ըմ. կանչիտ դարախանըմ¹ կ՛ճըն-
անչիմ: Առ էս երկու մանէթը (քցում է սեղանի
վրայ) աչքտ կոխիլը ուպրավաչունն ասի ինձ
մին տեղ անի: Պրծաւ քինաց: (Գնում է միջի
դռնով):

Տ Ե Ս Ի Լ 7.

Խ Ա Չ Ի մեկնակ:

ԽԱԶԻ (Ափշած): Արա տեսա՞ք հինչ ջվալ-
լաղին² ար: (Փողը դնում է գրպանը): Փանտալը
վէր մըտանըմ ա, գեանլիւրս³ շտանըմ ա: (Պատու-
հանից կանչում է): Միրգայ, Միրգայ, հէյ հէյ
Միրգայ:

ՄԻՐԶԱՅ (Դրսից): Ա հինչս ասըմ:

ԽԱԶԻ Արա էն ժամկիրըս Միրգաջանին
մինդա՛րին տական հանի պեր:

ՄԻՐԶԱՅ (Դրսից): Պա խէ՛. ⁴չինը՛մէչի
էշշա՛դ ըմ:⁴

¹խաղախորդարան, ²խորամանգ, ³եկամուտս,
⁴⁴համայնքապատկան էշ:

ԽԱԶԻ ԸՆԴՐԻՆ ԵՂԻ¹, ԸՆԴՐԻՆ: ԱՆՔԻՍ ԼԱՆ
ԵՂԻ¹. ԵՍ մին ԷՆՈՒԳՈՒԼ մարթ ըմ:

ՄԻՐԶԱՅ (Իրսոց): ԴԷ ԼԱՆ, ՍԱՍՄ ՔԷ
ՔԱՂԻ, ԱԷՐԸՄ ԸՆՔ:

ԽԱԶԻ (Ման գալով): Արմած՝ք զարմածք
պէն ա էս մըէր հայի պէնը: Ախպեր չուգօ՞ղու-
թիւնան սատկըմ ընք իլի: Պա իտի պէն կինի.
Տիւղնը սատկըմ ար, պերի վեղըաշու² տեղ տուի.
մհէկա օղըմն հօրտկամութիւնան³ ճաքի: Ասի
հի՛նչքան ընըշվաթ ըս⁴ տուալ. թա՞քշա⁵ էրկու
բաղի⁶:

Տ Ե Ս Ի Լ Ց.

Խ Ա Չ Ի Ե Ի Մ Ի Ր Չ Ա Յ

ՄԻՐԶԱՅ (Միջի դռնով: Տալով երկու գիրք),
Միրզաջանի մինգա՛րին տակին պէն չ՛կայ,
տրանք էլ չա՛լլագին⁷ եր՛ա ին:

ԽԱԶԻ Տնատա՛ր պա տա ժմնկիր ա՛,
թա՛ Ուհանջանին երքարանը: (Կարդում է):
«Ահա հղէ, յղի ա հաղ ա. յղի ա հեղի աղա».
Միրզա դիլթա՛րփա՛նմաղ ա՛⁸ է: (Գնում է կողմ):

¹տն՛ս, նայի՛ր, ²դուլակիր, ³գոռոցումիւնից,
⁴կաշառք, ⁵միմիայն, ⁶քսանկոպէկանոց, ⁷դուլ, ⁸լե-
զուանշարժ է:

ՄԻՐԶԱՅ Ատա դիլթա՛րփա՛մա՞ղ թա վէ՛րն
ա: էտա չըտվերտին փանտալ ա ըննական, (ցած)
թօրքը հինգ մանէթ ա տամ, վէր ընդրա կն-
նաւը¹ նօթ պէց թողնինք:

ԽԱԶԻ (Սաստեղով) Հ՞ը օլմիւն օլմիւն առ-
անց ինձ պէն ինի: (Նայում է միւս գիրքը): ԲՕ.
էգ հու ա: «Բըղնոյ² սլով»²:

ՄԻՐԶԱՅ ԵՍ կարթացալ չըմ. գիտա՛լ չըմ:

ԽԱԶԻ ԷՍ ա կարթացալ չըս վէր իտի
քոռ ըս մընացալ է:

ՄԻՐԶԱՅ Վէր տիւ կըրթեցած ըս է,
լափ լուսնընկին պօղան ըս³ փռնալ:

ԽԱԶԻ Տռնավարգեցի Միրզայ: ԱՆՔԻՍ
մաշին դիւզ եշի. ԵՍ մին ԷՆՈՒԳՈՒԼ մարթ ըմ:
(Կարդում է): «Պէտուչօկ-պէտուչօկ զալատոյ:
Գըէբըչօկ մասլենի: Գալովուչկա շեօլկօվնիկ:
Քօրուղչկա չտօ տի»⁴:

ՄԻՐԶԱՅ ԷՍ հի՛նչ ա ասըմ:

ԽԱԶԻ Ասըմ ա «այ վերցակ վերցակ. էս
խէ՛ կլեօխտ քաշ ըս քիցա՛լ, մրօքա ցեց ըրալ»:

¹տուն, ²—²մայրենի լեզու, ³եղջիւրիցն ես,
⁴—⁴«Աքլոր-արլոր ոսկի: Սանրիկ իւղած: Գլխիկ
մէտաբսի (ուզում է ասել): Սիրունիկ քնչես դու»:

ՄԻՐԶԱՅ էջ հու պը՛նդըլ ա՛: Տիւ ասոս
(ձայնը քաշացնելով). Սանդուխը քնած ա: (ժո-
ղովրդի կողմ հեզնածիծաղով): Հը մըէր ուլարավ-
լաչին նա՛րդիւմնին² «սանդուխ ա» ասըմ:
Հը հը:

ԽԱԶԻ Պա էտ ըս ասըմ Միրզայ (նոյնպէս
ցած ձայնով). դիւրգա՛ր³ Ջաւադին «Հիւէյին»
ա՛ ասըմ: (Ծիծաղները պահել չեն կարողանում):

ՄԻՐԶԱՅ (Երկիւղ կրելով, չ՛լինի Թէ Ալէք-
սանդըրը լսի նրա ծիծաղը, նստում է:) Պա քու
հինչ ասիմ: Հոս հոս հոս:

ԽԱԶԻ Ատա արչու տղայ, մըէզ բիարուռ
ըս⁴ ըննակսն: Տիւս:

ՄԻՐԶԱՅ (Վերկենալով): Բօ, բօ, բօ:

ԽԱԶԻ Տիւս ասըմ ըմ. Թա՛րս⁵ սիլան⁶
եկը տիւս:

ՄԻՐԶԱՅ Բօ, բօ, բօ:

ԽԱԶԻ Միրզայ, հս մին եասաղուլ⁷ մարթ
ըմ:

ՄԻՐԶԱՅ Եանի մըղըով⁸ ըս⁸ Թա՛ դալարա՛-
զի⁹ ըս: »Տիւս, հա տիւս»: Էրկու բազին կիսօսի:

¹հանելուկ, ²սանդուխը, ³հիւսն, ⁴խայտառակ,
⁵ձախ, ⁶ափտակ. ⁷եստուկ, ⁸—⁹զաւառապետ:

ԽԱԶԻ Ատա քու էրկու բաղուտ մոն ըմ
նդօվայ: (Տալով նրան փող): Ունը սու կըլխաս
իլ: (Պուրս է բերում միջի ղոնով, ինքը ևս հետը
զընում զոռոտալով).

Տ Ե Ս Ի Լ 9.

ԱԼԷՔԱՍՊԻ Վենակ, յեճոյ ԱՆԹԱՌԱՄ:

ԱԼԷՔ. (Մտնում է միջի ղոնով): Այդ ինչ
աղմուկ էր. չ՛թողին մի քիչ հանգստանամ:
Ռ՛ւր կորաւ Խաչին: Սիրում եմ այդ տղային.
չատ հաւատարիմ է ինձ և Կարապետ Ռուստա-
միչի մօտ գովելով, ինձ երկիրք է հանում:

ԱՆԹ. (Մտնելով միջի ղոնով). Ալիքսանը
տի՛ւ ըս:

ԱԼԷՔ. Հրամներես այան: Ի՛նչ էք կամե-
նում:

ԱՆԹ. (Մօտենալով նալում է Ալէքսանդրին):
Ըմբօ. (ցոյց տալով նորա միրուքը): Ա չիւմբիւլ¹
էտ խէ՛ իմ խօխիս² տիւս ըս բցա՛լ:

ԱԼԷՔ. (Կողմ): Յերէմօնի շէ սիրում տի-
կինը: (Անձառամին): Ռ՛ով է ձեր խօխան:

ԱՆԹ. Միրզա՛ն ա՛, հով ա՛:

1ձնտոի վրայ միրուք, 2երեսայիս:

Ա.Լ.Բ. (Կողմ): Էլի Միրզա:

Ա.ՆԹ. Էրկու տարի ա՛ ըստեղ դուլլուղ ար
անըմ, հանի քու հացտ ար օ՞տըմ: Ախր թա՛ղա՛-
գա՛լզի՛ ըս տեռալ: Մըբին ե՛շի: Էտ ա քինա՛մ
չա՛հա՛ր՝ խօխիս էլհա՛ ղըրկըլա՛ կան ըմ կօշտըտ՝

Ա.Լ.Բ. (Կողմ): Եւ մենք գանգատուում ենք
թէ հայ կնոջ մէջ քաջութիւն չ՛կայ: Այան հրա-
մայում ե՞ս թէ խնդրում:

Ա.ՆԹ. Խնդրում ըմ Ալիքսան ջան: Հա՛նց
ապրիս մունք էլ հայ ընք, քրիստօնայ ընք:
Ղարիբ՝ օ՛լքա՛ա՛: Հա՛նց ինի իրես պարզ
ինինք, իւ՛րիւ՛շիւ՛ հացի մօ՛յթա՛ջ՝ շինինք:
մունք էլ մին օջախի օ՛ւլա՛գ ընք՝: Տու ինձ
ճնանչըմ չըս. ես Խօջա-Արզմանին խօխոց
մարն ըմ: Հըռնէ չի մէկալ տարին օ՛վումը վա-
րազը եարալու,⁸ ընգնում ա երան էնդազա
կեռքու ա տամ, վէր թա՛ք էրկու օր ապրից:
(Զգացված): Թա չէ ես հշտե՞ղ, Բալախանին հըշ-
տե՞ղ, Վա՛րա՛նդիւ մհալը՝⁹ հըշտեղ:

Ա.Լ.Բ. Վնաս չունէ. ուղարկեցէ՛ք գայ:
Աստուծով ֆանտաններըս կ՛խփի մի գործի
կ՛ գնենք:

¹նորեկ, ²քաղաք, ³մօտղ, ⁴օտար, ⁵երկիր,
⁶կարօտ, ⁷ցեղ, ⁸կիրաւոր, ⁹գաւառ:

Ա.ՆԹ. Հաս ապրիս Ալիքսան. Աստուծ
ումբըրտ՝ երկան անի: (Դնում է սեղանի վրայ
մի գոյգ գուլբայ): Էտ էլ բեղ փեշքէ՛չ՝:

ԽԱԶԻ (Միջի ղոնով մտնում է. Ալիքսան-
ղրին): Կանաթը՝³ պե՛րին: Ամմա փթա՛ծա, խել-
քըս պէն չի կարում: Մին եշիք, լաւ կինի
(Ալիքսանղր միջի ղոնով գնում է:

Տ Ե Ս Ի Լ 10.

Ա.ՆԹ.Ա.Ռ.Ա.Մ ԵՒ ԽԱԶԻ:

Ա.ՆԹ. (Մտածելով գալիս է բէմի առաջ):
Եարար էտ Ալիքսանը Թա՛ղա՛գիւլին տղան ա,
թա՛ա Ղա՛լա՛գեցի ա՛ղուն թոռննա: (Խաջին, որ
ձախ անկիւնումն է կանգնած, չի նկատում: Հեռա-
խոսի զանգակը խփում է): Վույ ա գեա՛ղա՛՛ վա-
խեցի. Վույ իմ հա՛ր ձըրեղ մատաղ վխեցի. (Զան-
գակը): Վույ քաշքեր ըն. վույ հրաժարամ սա-
տանայ: (Նորից հնչում է զանգակը): Վույ իմ
հա՛ր քմատաղ վխեցի: (Ուզում է փախչել միջի
ղոնով, նկատելով ափշած Խաջին): Վա՛յ (Անցնում
Ալիքսանղրի տեղը):

ԽԱԶԻ Այան էտ խէյ ըս կիօղու կացալ:
(Զանգակ):

¹կեանքղ, ²ընծայ, ³պարանը, ⁴տղայ:

ԱՆԹ. Ա տղայ պա հայ ըս' խէշըս խօսումէ
(Յոյց տալով հնչող զանգակը): Լսում չը^ս: Սը-
տանա ա:

ԽԱԶԻ Այան էտ հի՛նչ ստանի սօհրաթմ:¹

ԱՆԹ. Վոյ ա գեաղա վխեցի: Մին խօսի
իլի, հի՛նչ թա՛հրը մարթ ըս:

ԽԱԶԻ Հա հա հա: Տըլփօ՞հն ըս ա՛սըմ:
Հա հա հա: Պա մարթ էլ էտ պուջուր² զան-
գիւլահան³ կ'վա՞խի: Հա հա հա: Ըտա մին մա՛-
ղա՛լլի⁴ մաշին ա: Վախիլ մի՛ր. եկ շանց տամ,
տէ՛ս էտ աըլփօնը հունց աչնա:

ԱՆԹ. Վախըմըմ:

ԽԱԶԻ Այան սիրէգինիտ⁵ ա՛հողը լա՛հա՞⁶
կնէկարմատ ա. խէ՞ տիւ վա՛խըմ ըս նա վուչ: Մու-
տաց, եշի: Կըքընա՛ս շէնըմը կ՛ասիս, լօխ⁷ էլ
կ՛ղարմանան: (Անձառամ մօտենում է): Եշի. տե՛ս
ըտորա մաշին կեծակ կայ:

ԱՆԹ. Ես կ'վախիմ:

ԽԱԶԻ Ատա էս եքքա՞⁸ տղամարթը ըշ-
տիտ, խէ՞ ըս վախըմ: Ես ըտտե՛ղան խտի զա՛ն-
գը կ'տամ (Զանգ է տալիս): Մաղմաղիլը⁹ կասի:

¹խօսակցութիւն է, ²փորքիկ, ³զանգակից, ⁴հե-
տաքրքիր, ⁵միացնել, ⁶հենց, ⁷բոլորը, ⁸մեծ: ⁹օրհոր-

(կանացի ծայնով): «ցէնդըալին»: ¹ (Լսում է):
Ասից: Ես ընդրան ըսլական ըմ. (Ասում է քն-
քուշուծեսմը). ²սերեգնիտ է պաթօլտայ կիս-
լօսէննիյ զաւօտու² Փրանգուլ հատրութիչ Փո-
նաիթովը: Մ՛հէկս հա՛ղիը ա: Զա՛նգը տամ,
խօսե՛ու ըն:

ԱՆԹ. Տիւք էտա ոսավէր ըք խոսըմ. ախը
ես գիւարմ շըմ:

ԽԱԶԻ Պա տնաշին, օղումըս լհա մօլթա՛-
նու լի՛ւղիւ խօսի: (Զանգը տալիս է): Ե՛շի:
(Խօսում է): Ըխ՞տօ ապարատ: Զիլփի³ տիւ ըս:
(Քիչ քաշ): Զդէս աղին զարարաղսկի մաղամ
եստ⁴. կարող ըս եննան խօսիս: (Անձառամին):
Աս տի՛ր անջուկըմըտ համ լսի, համ խօսի:

ԱՆԹ. (Կատարում է): Հո՛ւլս. Ընթառա-
նը: շի՛նչըս ասըմ: Ըմմ թի՛ւ. (զանգ տալով):
Առայ է, առայ: (Թողնում է խօսելը):

ԽԱԶԻ (Ծիծաղելով): Հա հա հա: Այան
հի՛նչ ասից:

ԱՆԹ. Մօխըս ընդրա գլխին: (Խաչին
հոհոում է):

¹կենտրոնական, ²—²միացրէք խնդրեմ ԹԹվա-
ծնի գործարան, ³պատրաստէ, ⁴այստեղ մի դարա-
բաղի տիկին կայ:

Տ Ե Ս Ի Լ 11.

ԽԱԶԻ, ԱՆԹԱՌԱՍ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ:

ԿԱՐԱՊ. (Միջի դռնով գալով): Այտ ի՞նչ է:

ԽԱԶԻ (Վախեցած): Մայրըս ա... բիրիս¹ ա...
Միրզի այանն ա... Օհանջանի նանն ա²....

ԿԱՐԱՊ. Ուրեմն չորս հոգի են. բաս մնացեալները ո՞րտեղ են: (Հանդարտ Խաչիին):
Գործ ունիս գնա՛ (Խաչին գնում է միջի դռնով):
Այ կնիկ մարդդ է այստեղ բանում:

ԱՆԹ. (Գլխով ոչ ասելու նշան է անում):

ԿԱՐԱՊ. Տղատ է մեզ մօտ:

ԱՆԹ. (Գլխով «այո» է անում):

ԿԱՐԱՊ. Քանի՛ տղայ ունես:

ԱՆԹ. Մատերով ինն է ցոյց տալիս և
գնում միջի դռնով: Հորախօսի գանգակը հնչում է):

ԿԱՐԱՊ. (Մօտենում է խօսելու): Հա Խաչին
եմ: Ո՞վ. Զիլֆի: Հա ի՞նչ ես ասում. Ի՞նչ մա-
դամ: Կորի՛ր հեռախօսից անըզգամ. միւս անգամ
չ'համարձակվես խօսել այո նաֆթահանքի հետ:
Տխմար ես դու էլ, Խաչին էլ. (Բիշ լսելուց լետոյ):
Ես քեզ ասում եմ ձայնդ կտրի՛ր: (Թողնում է

¹հորաբորս է, ²մեծմայրը:

հեռանում): Աստուած վեր կառնի: Գործները
թողնեն և հեռախօսով յիմարութիւններ խօսեն:
Ինձ ասելին «Ֆանտան ունենք, ֆանտանը
լսփում է». վազ է վազ կառքը քշել եմ տուել,
եկել, իսկ այստեղ ոչինչ չկայ: 100 հազար
փող եմ ծախսել, իսկ այստեղ գիշերը թուղթ
են խաղում, ցերեկը քընում են. ոչ մեծ կայ,
ոչ փոքր: Ես էլ յիմար յիմար քաղաքում բղաւեցի
թէ ֆանտան ունեմ:

Տ Ե Ս Ի Լ 12.

ԿԱՐԱՊԵՏ, ԱԼԵԿՍԱՆԴԻ ԵՒ ԽԱԶԻ:

(Միջի դռնով դալիս են):

ԱԼԵԿ. Այ տղայ, Խաչի, այդ ո՞վ է Կա-
րապետ Ռուստամիչին յայտնել թէ ֆանտան է:

ԽԱԶԻ Մեղայ Ասծու թա ես իտի պէն
ինիմ ասած:

ԿԱՐԱՊ. Ուրեմն խօսողը դո՞ւ ես եղել:
Իսկ այն թէ «տւանակը ապերդ ս»:

ԽԱԶԻ էտ տըլըփօնն ա ծօռ: Ես հա՛նց-
գիտա՛մ Աւանէս ապերն ա. ըսեցի Աւանէս ապեր.
էտ ա տըլփօնաւ «Աւանակը ապերտ» ս տիւս
եկալ:

ԿԱՐԱՊ. Բաս ֆանտանը, որ ասեցիր թէ
«թըլում ա»:

ԽԱԶԻ Ես ասալ ըմ Մանթաշմի փանթաւն
ա թխում:

ԿԱՐԱՊ. (Նրա խօսքը կտրելով): Ձայնդ
անդգամ: Ոչ մեծ կայ, ոչ փստիկ կայ. տունս քան-
դեցիր: Փող է որ տներ, հա տներ: Ինչ է, թոգ
տներ, երկաթ տներ, խողովակ տներ, փայտ
տներ, գերան տներ, մեքենայ տներ: Տուններս
քանդվեց, լսող չ'կայ: Մինը ժալօնկան է հորում
թողնում, մինը կացինը չի կարողանում հանել:

ԱԼԷՔ. Մի փոքր էլ համբերեցէք Կարա-
պետ Ռուստամիչ, փարբ Ասածոյ գործներս
լաւ է գնում:

ԿԱՐԱՊ. Տաներկու տարի է սպասում եմ
այ անաչէնի աղայ, 12 տարի: Բուականն չի:
(Նստում է):

ԽԱԶԻ (Ալէքսանդրին): Մհէկս հինչ ըս
ասըմ: Էս Չափազաթը մին գեօղալ սիւքանչի
ա. հանց ինի ձեքներաս աիւս չիկա: Էն ա
պէտի նումէրըմն ըմ տիրալ ժալումկան հանի:

ԱԼԷՔ. Փանտան հոր քաշած կայ:

ԽԱԶԻ Չամ.

ԿԱՐԱՊ. Տօ, դուք սրա խօսքով էք մարդ
բըռնում.....

146դեցիկ:

ԱԼԷՔ. Միկնոյն չէ:

ԿԱՐԱՊ. Նա վերապերեալ ձեր ասէր թէ
դուք գիշերն ողջուն առնեալ լինէք զթղթա-
խազս. (Խաչին հետաքրքրութեամբ լսում է):

ԱԼԷՔ. (Ծիծաղելով նայում է Խաչին):
Ձայս աւանակն ասացեալ իցէ:

ԿԱՐԱՊ. Եւ որ ՚ի տունջեանն ողջոյն,
միայն և եթէ ՚ի գիրգ Մօրֆէոսի ննջէք:

ԱԼԷՔ. Ձայս արջի քոթէթին ասացեալ իցէ:

ԽԱԶԻ Հմ. գիտըմ ըն թա մունք էչ ընք,
գիրափառ գիւղըմ չընք: Էս դօրթ ա էա Չա-
փազաթը մին խրէկ կարտի ափող ա, ցիրեկն էլ
քնող: Ամա իմ ցէքումս, առուի ես ընդրա մում
կանիմ:

ԿԱՐԱՊ. Է՛լի պատմութիւնը փոխվեց:
Ուրեմն այդ էլ ուրիշ կերպ եմ հասկացել:
Թիւ: Կորիր: (Խաչին գնաց միջի դռնով):

ԱԼԷՔ. Նա ինձ համար ձեղ վատ բան
չի ասի: Նա ինձ պաշտում է:

Տ Ե Ս Ի Լ 13.

ԿԱՐԱՊԵՏ, ԱԼԷՔ., ՇՍՓԱՂԱԹ ԵՒ ՄԻՐԶԱՅ

ՄԻՐԶԱՅ (Միջով գալով): Աղա աշկա
լիւս: Փարոյ նումերի բալթան աիւս եկը:

ԿԱՐԱՊ. Օ՝ փառք Ասծոյ, փառք Ասծոյ:
 ՇԱՅԱՂ. Աղա աչքա լիւս, պէտի նումէրի
 ժալումկան հանեցի:

ԿԱՐԱՊ. Օ՝ օ՝ օ. վերջապէս, վերջապէս:
 Տ Ե Ս Ի Լ 14.

ԿԱՐԱՊԵՏ, ԱԼԷՔՍԱՆԴՐ, ՇԱՅԱՂԱԹ, ՄԻՐՉԱՅ,
 ԽԱԶԻ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ՄՇԱԿՆԵՐ

ԽԱԶԻ Աղա փանտալը թխից, աչքա լիւս:
 ԱԼԷՔ. Ասացի Կ. Ռուստամիչ, որ Բալա-
 խանիի գործը համբերութիւն է սիրում: Տեսնո՞ւք:
 ԽԱԶԻ Մըշաըլըղըս տօք: (Թոշկոտում է):
 ԿԱՐԱՊ. Օ փառք քեզ Ասաւած: (Փող է
 հանում): (Դրսում աղմուկ):

ԱԼԷՔ. (Սիրտիկի փէշը գլխին է քաշում
 որ դուրս վազի): Չուտով թիակները վերցրէք,
 եկէք իմ ետեից:

ԽԱԶԻ Ես լինա տեսի վէր քարերը թախ
 պալարօմքօմ ախա քիցից, փանտալն էլ քմա-
 կան փըռ փը՛ռո՛ւ: (Կարպետը փող է տալիս
 և դուրս է գնում ամենքը նրա ետեից բղաւելով):
 Այ հո՛յ, հառա՛յ, փանտալ ա, փանտալ ա:
 (Նոյնը կրկնում են և մշակները):



«Ազգային գրադարան»



NL0328258


58388-67

16.674

Ձմռ
5982

„Արօր-ի“ հրատարակութեամբ լոյս են տեսել
և վաճառում են:

- 1) Քամակեան Ս.—Ձէն թագաւորի ազջիկը 25 կ.
- 2) Քամակեան Ս.—Երկու աղբերացեղ կամ
Խարազի աղան 30 կ.
- 3) Արէլեան Ալ.—Նաֆթի ֆանտան . . 10 կ.



Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
Խաժակ Գ.—Հ Ա Ր Կ Ե Ր Ը Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ի Ո Ւ Մ է

- 1) Войничъ, Оводъ.
- 2) Зуттнеръ, Долой оружіе.
- 3) Французъ, Борьба за право.

